ցորենը ջոկելու համար հոտսելիով քամուն են տալիս. զըտուած ցորենակոյտը կոչւում է շեղջ, իսկ մանրուկ ծղոնները՝ յարդ կամ դարման։

Գիւղում գործածւող երկրագործական գործիքները հետևեալներն են.

ԳՈՐԾԻՔՆԵՐ				ՕՐՕՐ	ՍՈՑԼԵՐ	ԿԱՄԵՐ ՀԱՄԵՐ	ՋՐԱՋՐՈՒՆԵՐ
Ցանելու	Հնձելու	Քամելու	Հատիկներ մաքրելու	Երկու լուծ եզ	2 ակով	—	—
Հեռքով	Մանգաղով-գերանդի։	Հոտսելի, կալը խառնելու գործիք է, որ 10 մատ ունի։	Մաղով։	Դեռինը վարող, հերկող գործիք է։	—	—	—

Նաև փայտէ եղան, բահ, թի եայլն։

Քաղաքացիական վիճակ: Հայ գիւղերը, լինեն նրանք արքունական թէ մասնաւոր կալուածատէրերի սեպհականութիւն՝ ունեն մի գիւղապետ կամ ռեյիս (քէդխուդա), որին ընտրում է գիւղի խանը վէճերը տեսնելու, հարկերը հաւաքելու և խանին կամ «առբաբին» (կալուածատէրին) յանձնելու, իսկ առբաբն էլ տալիս է քաղաքապետին, նա էլ կառավարութեան։ Բայց ազգաբնակութիւնը չունենալով քաղաքացիական հաստատ օրէնսդրութիւն, ենթակայ է շարունակ կալուածատէրերի, քէդխուդաների և խաների կամայականութիւններին. օրինակ տէրութեան հարկը (մալեաթ) կալուածատէրն է վճարում, բայց նա վճարածից շատ աւելին այդ անունով ստանում է երկրագործներից և այդ է պատճառը՝ որ գիւղացիութիւնը հեծում է ծանր հարկերի տակ։

Խաները գիւղերում կատարեալ ինքնիշխան և միահեծան բռնակալներ են։ Նրանք հսկում են գիւղերի վրայ, անհամաձայնութիւններն ու վէճերը քննում ու վճիռներ կայացնում։ Գիւղերում նրանք ունեն չափազանց ընդարձակ կալուածներ։ Երբեմն ամբողջ գիւղը խանին է պատկանում։ Ընդհանրապէս խաները շատ շքեղ ու փարթամ կեանք են վարում։